

01/10.1/3957-09

2009-06-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲԲԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արթուր Աղաբեկյանի, Միքայել Մանուկյանի և Աշոտ Տոնոյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Համաձայն «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ կենսաթոշակի անցնելու կապակցությամբ օրենքով սահմանված կարգով պահեստարձակված, սույն օրենքի 13-րդ հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինձառայողների, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինձառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքների անդամների բժշկական սպասարկումը կատարվում է զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների համար սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Այսինքն՝ նշված անձանց բժշկական սպասարկումը, նույն հոդվածի 1-ին մասի համաձայն, իրականացվում է գերատեսչական բժշկական հիմնարկներում: Առաջարկվող փոփոխության արդյունքում նշված անձինք, որոնք, համաձայն նախագծին կից ներկայացված հիմնավորման, մոտավորապես 50000 են, բժշկական օգնություն և սպասարկում են ստանալու քաղաքացիական բժշկական հաստատություններից, ինչը ոչ միայն հակասում է նույն հոդվածի 1-

ին մասին, այլև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում կառաջացնի լրացուցիչ ծախսեր:

Բացի դրանից, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության **2004** թվականի մարտի **4**-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» **N 318**-Ն որոշմամբ՝ զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներն ընդգրկված են պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում և օգտվում են անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից:

Ինչ վերաբերում է անհետաձգելի բժշկական օգնության տրամադրմանը, ապա նպատակահարմար չէ այն տեղափոխել բացառապես գերատեսչական հիմնարկներ, քանի որ գերատեսչական բժշկական հաստատությունները Հայաստանի Հանրապետության ոչ բոլոր մարզերում են առկա, իսկ անհետաձգելի դեպքերը կարող են պատահել ցանկացած վայրում: Նախագծի ընդունման դեպքում կխախտվի այդ կատեգորիայի անձանց «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **19**-րդ հոդվածով վերապահված իրավունքը:

Հարկ ենք համարում նշել, որ նախագծի **1**-ին հոդվածի **1**-ին մասի քննարկմանը կարելի է անդրադառնալ պետության եկամուտների ավելացման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության **2010-2012** թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի վերանայման շրջանակներում:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն անպատակահարմար է համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Գևորգ Պետրոսյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին**

**Հոդված 1** «Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի, ՀՕ-258 օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Զինձառայողների եւ ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինձառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքների անդամներին, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ օրենքով սահմանված կարգով պահեստ արձակված եւ սույն օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինձառայողներին ցույց է տրվում անվճար` պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական ծրագրի շրջանակներում բժշկական սպասարկում` Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի բժշկական հիմնարկներում, որի կարգը եւ պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Անհետաձգելի դեպքերում զինձառայողների ընտանիքների անդամներին անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց է տրվում համապատասխան գերատեսչական բժշկական հիմնարկներում` համապատասխան մարմինների միջոցների հաշվին` բուժման ծախսերի հետագա փոխհատուցմամբ, որի կարգը եւ պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«Զինձառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

Օրենքի 33 հոդվածում մատնանշված գերատեսչական բժշկական հիմնարկները դրանք կայազորային եւ կենտրոնական հոսպիտալներն են:

Կայազորային հոսպիտալների հնարավորությունները սահմանափակ են թե մահճակալների քանակության առումով, թե մասնագիտական կազմի հնարավորությունների առումով, դրանք հիմնականում ծառայում են շտապ դեպքերին եւ անհրաժեշտ շտապ բուժումներ եւ եվակուացիաներ ու կանխարգելման միջոցառումներ անցկացնելու համար:

Հիմնական բուժական եւ վիրահատական միջամտությունները իրականացվում է կենտրոնական կլինիկական հոսպիտալում:

Կլինիկական կենտրոնական հոսպիտալը հաշվարկված է ըստ զինված ուժերի թվաքանակի եւ ունի **400** մահճակալ: Վերջին տարիներին կենտրոնական հոսպիտալը աշխատում է գերծանրաբեռնված վիճակում, ինչը ազդել է բուժական գործի որակի վրա: Գերծանրաբեռնվածության պատճառներից է նաեւ այն, որ **2005**թ-ից սկսած հոսպիտալից սկսեցին օգտվել նաեւ սույն օրենքի **33** հոդվածի պահանջներին համապատասխան քաղաքացիներ:

Եթե օրենքի **33** հոդվածը ամբողջությամբ կիրառվի, ապա գործ կունենանք մոտ **500000** քաղաքացիների հետ:

Օրենքը կիրառվում է կամայականորեն, ըստ քաղաքացու կամ զինծառայողի դիմումի: Իրականացվող բուժական գործը չի բխում ՀՀ կառավարության որդեգրած առողջապահության կազմակերպման քաղաքականությունից:

Կառավարության որդեգրած ամբուլատոր բուժօգնության եւ հոսպիտալային օղակում իրականացվող բուժական գործի միջեւ ոչ մի կապ գոյություն չունի: Ապացույցը միայն այն փաստը, որ գերատեսչական բուժհիմնարկներում հիվանդին հոսպիտալացնելու համար հիմք է հանդիսանում անձը հաստատող փաստաթղթերը եւ կապը զինծառայողի հետ:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ երբեք ռազմական բժշկության ծախսերը պլանավորելուց հաշվի չի առնվել նշված կազմը եւ սահմանափակ ֆինանսական միջոցներով անհնար է պլանավորել այդ կազմի բուժումը:

Օրենքի **33** հոդվածի պահանջների ճիշտ կիրառումը կիրականացվի միայն այն դեպքում, եթե նշված կազմի բուժում կազմակերպվի քաղաքացիական բոլոր կարգի հիվանդանոցներում:

Ներկայացված օրինագիծը ընդունվելու դեպքում`

1. Օրենքով նշված կատեգորիաները բուժում կստանան ըստ բնակության վայրի:
2. Հստակ կգործի բուժական գործի շարունակականությունը` ամբուլատոր բուժում, հիվանդանոցային բուժում, ամբուլատոր հաշվառում:
3. Առողջապահական հիմնարկները որպես շահագրգիռ կողմ ավելի էֆեկտիվ կկազմակերպեն նշված կազմի բուժումը եւ յուրովի դերակատարություն կունենան հայրենիքի պաշտպանին ոգեշնչելու գործում:
4. Զինվորական հիվանդանոցները կլծվեն իրենց հիմնական առաքելությանը:

Օրենքի փոփոխության հետ անհրաժեշտ ենք համարում կառավարության որոշմամբ «ընտանիքի անդամ» հասկացության սահմանումը: Իրավական միակ հիմնավորումը կարող է լինել համատեղ տնտեսություն վարելու փաստը, որը կիրառելի չէ ժամկետային զինծառայողների ընտանիքների պարագայում: Կարծում ենք ժամկետային պարտադիր զինծառայողների համար պետք է լինի հայրը, մայրը եւ անչափահաս քույր եղբայրը, իսկ

պրոֆեսիոնալ պայմանագրային զինծառայողների համար պետք է լինի կինը, զավակները, հայրը եւ մայրը, եթե հաշվառված են տվյալ կայագործում եւ ապրում են նրա հետ: